

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-16/48>>**

ք. Երևան

<<09>> դեկտեմբեր 2016թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Նիկողոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՍՏՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման (ավտոմեքենաների վերանորոգման) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ մասնակացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի (մեկ ամսվա) կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1369700 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա (հավելված N2) վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 քանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 23.12.2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ սույն

պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի աղյուսակ 1-ի 3-րդ և աղյուսակ 2-ի 4-րդ կետերով սահմանված որակի պահանջները խախտելու յուրաքանչյուր դեպքում՝ սույն պայմանագրի տվյալ տարվա համար նախատեսված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011022085

ՀՎՀՀ 02505554

էլ. հասցեն՝ gnumner@gov.am



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք.Երևան, Թբիլիսյան խճ. N20

«Կոնվերսանկ» ՓԲԸ

Հ/Հ 193004674290

ՀՎՀՀ 00840437

էլ. հասցեն՝ hyundaigarant@yahoo.com

հեռ. 28-54-47



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում

| NN | SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ըստ չափաբաժինների | | | | | |
|---|---|--|----------------|--|------------------|-------------------------------------|-------------------------------------|
| | | Նիսսան Տիդա | Նիսսան Մաքսիմա | Հյունդայի էլանտրա, Հյունդայի Սոնատա, Հյունդայի H-1 | Հյունդայի Tucson | Լեքսուս LX-470, Տոյոտա land cruiser | Հյունդայի COUNTY 3.5լ-3,9լ ավտոբուս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| SU-1 ներառվող ծառայությունների անվանումը | | Գնացուցակ /հազար ՀՀ դրամ/ | | | | | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Արտացման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | | 0 | | | | 0 |
| 7 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | 0 | | 0 | 0 | 0 | |
| 8 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 9 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | | | | 0 | 0 | |
| 10 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 11 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 12 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | ABS համակարգի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | |
| 14 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 15 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 16 | Թափքի վիճակի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 17 | Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| SU-1 ներառվող ծառայությունների անվանումը | | | | | | | |
| 18 | Շարժիչի հանում տեղադրում | 50 | 50 | 50 | 60 | 60 | 60 |
| 19 | Լույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |

| | | | | | | | |
|--|---|-----|-----|-----|-----|-----|-----|
| 20 | Նույնը կոնդիցիոնների դեպքում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 21 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 1 | 1 | 1 | 1 | 1 | |
| 22 | Շարժիչի վերականգնում | 180 | 180 | 180 | 200 | 200 | 300 |
| 23 | Նույնը DOHC դեպքում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 24 | Նույնը V6-ի դեպքում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 25 | Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում | 5 | 5 | 5 | 6 | 6 | 6 |
| 26 | Բ/լիստեղի կափարիչի հանում և տեղադրում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 27 | Նույնը աջի համար (V6) | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 28 | Նույնը ձախի համար (V6) | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 29 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 40 | 40 | 40 | 50 | 50 | 50 |
| 30 | Նույնը աջի համար (V6) | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 31 | Նույնը ձախի համար (V6) | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 32 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 33 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 40 | 40 | 40 | 50 | 60 | 60 |
| 34 | Փականի խցուկի փոխարինում | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 35 | Նույնը V6-ի դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 36 | Բաշխիչ լիստեղի հանում և տեղադրում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 37 | Նույնը V6-ի ձախի դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 38 | Նույնը V6-ի աջի դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 39 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 40 | Բաշխիչ լիստեղի խցուկի փոխարինում | 13 | 13 | 13 | 17 | 17 | 17 |
| 41 | Հրիչների փոխարինում DOHC | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 42 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 43 | Ատամնավոր փոկի փոխարինում | 30 | 30 | 30 | 30 | 30 | |
| 44 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 45 | Նույնը V6-ի դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 46 | Ծնկաձև լիստեղի առջևի խցուկի փոխարինում | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 47 | Նույնը կոնդիցիոնների դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 48 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 49 | Նույնը կոնդիցիոնների դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 50 | Նույնը V6-ի դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 51 | Նույնը կոնդիցիոնների դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 52 | Ծնկաձև լիստեղի հետևի խցուկի փոխարինում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 53 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | |
| 54 | Մխոցային օդակների փոխարինում | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 55 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 56 | Նույնը V6-ի դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 57 | Թափանիվի հանում և տեղադրում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | | | | | | |

| | | | | | | | |
|--|--|-----|-----|-----|-----|-----|-----|
| 58 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 59 | Յուղի պոմպի փոխարինում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 60 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 61 | Նույնը V6-ի դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 62 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 63 | Բոնկման կարգավորում | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 64 | CO կարգավորում | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 67 | Օդի զտիչի փոխարինում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 68 | Սրահի զտիչի փոխարինում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 69 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 1 | 1 | 1 | 1 | 1 | |
| 70 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 30 | 30 | 30 | 30 | 40 | |
| 71 | Վառելիքի մղիչի փոխարինում | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 72 | Վառելիքի զտիչի փոխարինում | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 73 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | 8 | 8 | 8 | 10 | 10 | 10 |
| 3. Սառեցման և արտաձման համակարգ | | | | | | | |
| 76 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 77 | Հովհարի հանում և տեղադրում | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 78 | Ռադիատորի հանում և տեղադրում | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 |
| 79 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 80 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 0.1 | | 0.1 | 0.1 | 0.1 | |
| 81 | Ռադիատորի վերանորոգում | 50 | 50 | 50 | 50 | 50 | 50 |
| 82 | Թերմոստատի փոխարինում | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| 83 | Ջրի պոմպի փոխարինում | 18 | 18 | 18 | 22 | 22 | 22 |
| 84 | Նույնը DOHC և V-6 դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 85 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 86 | Ջրի պոմպի վերանորոգում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 87 | Նույնը DOHC դեպքում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 88 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 89 | Ընդարձակող բաքի փոխարինում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 90 | Խլարարի հանում և տեղադրում | 10 | 10 | 10 | 11 | 11 | 11 |
| 91 | Նույնը DOHC դեպքում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 92 | Ռադիատորի փողոակի հանում և տեղադրում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 93 | Սրահի զտիչի փոխարինում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ | | | | | | | |
| 94 | Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում | 6 | 6 | 6 | 8 | 8 | 8 |
| 95 | Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 96 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 0.1 | 25 | 0.1 | 0.1 | 0.1 | 24 |
| 97 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 98 | Կցորդման ճոպանի հանում և | | 6 | | | | |

| | | | | | | | |
|--|---|-----|----|-----|-----|-----|----|
| | տեղադրում | | | | | | |
| 99 | ՓՏ-ի հանում և տեղադրում | | 30 | | | | 40 |
| 100 | ՓՏ-ի վերանորոգում | | 40 | | | | 50 |
| 101 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | | 1 | | | | 1 |
| 102 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | | 10 | | | | 20 |
| 103 | Վազքաչափի շարժարեր փոխարինում | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 104 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | 1 | | 1 | 1 | 1 | |
| 105 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | 1 | | 20 | 22 | 22 | |
| 106 | Նույնը V6-ի համար | 0.1 | | 0.1 | 0.1 | 0.1 | |
| 107 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | 55 | | 55 | 85 | 85 | |
| 108 | Նույնը V6-ի համար | 0.1 | | 0.1 | 0.1 | 0.1 | |
| 109 | ԱՓՏ-ի վերանորոգում | 120 | | 160 | 160 | 160 | |
| 110 | Նույնը V6-ի համար | 0.1 | | 0.1 | 0.1 | 0.1 | |
| 111 | ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում | 12 | | 12 | 15 | 15 | |
| 5.Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | | | | | | | |
| 112 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | | | | 20 | 20 | |
| 113 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով | | | | 60 | 60 | |
| 114 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | | | | 10 | 10 | |
| 115 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | | | | 8 | 8 | 8 |
| 116 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում,վերանորոգումով | | | | 18 | 18 | 18 |
| 117 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | | | | 7 | 7 | 7 |
| 118 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում | | | | 7 | 7 | 7 |
| 6.Առջևի և հետևի կամրջակներ | | | | | | | |
| 119 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | | | | 25 | 25 | 25 |
| 120 | Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում | | | | 35 | 35 | 35 |
| 121 | Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում | | | | 25 | 25 | 25 |
| 122 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում | | | | 15 | 15 | 15 |
| 123 | Կիսաստնու առանցքակալի փոխարինում | | | | 3 | 3 | 3 |
| 7. Կախոց | | | | | | | |
| 124 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 |
| 125 | Տրավերսի հանում և տեղադրում | 25 | 25 | 10 | 25 | 10 | 10 |
| 126 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում | 6 | 6 | 6 | 6 | 6 | |
| 127 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |

| | | | | | | | |
|-----|---|-----|-----|-----|-----|-----|-----|
| 128 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 129 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 130 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | | | | 0.1 | 0.1 | 0.1 |
| 131 | Ձախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում | 6 | 6 | 6 | 8 | 8 | |
| 132 | Ձախ կամ աջ հողակալի առանցքակալների փոխարինում | 3 | 3 | 3 | 3 | 3 | |
| 133 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 5 | 5 | 5 | 6 | 6 | 6 |
| 134 | Չսպանակի հանում և տեղադրում | 7 | 7 | 7 | 8 | 8 | |
| 135 | Չսպակի հանում և տեղադրում | | | | | | 8 |
| 136 | Չսպակի վրանների փոխարինում | | | | | | 15 |
| 137 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 7 | 7 | 7 | 9 | 9 | 9 |
| 138 | Ներքևի լծակի վրանների տեղադրում | 7 | 7 | 7 | 9 | 9 | 9 |
| 139 | Ներքևի լծակի վրանների փոխարինում | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| 140 | Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 141 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 5 | 5 | 5 | 7 | 7 | 7 |
| 142 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 143 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 15 | 15 | 15 | 17 | 17 | 17 |
| 144 | Վերևի լծակի վրանների փոխարինում | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| 145 | Գնդե հողակալների փոխարինում | 5 | 5 | 8 | 7 | 7 | |
| 146 | Ծայրականների հանում և տեղադրում | 6 | 6 | 6 | 7 | 7 | 7 |
| 147 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 7 | 7 | 7 | 8 | 8 | 8 |
| 148 | Առջևի կայունարարի վրանների փոխարինում | 7 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 149 | Առջևի կայունարարի առջևի վրանների փոխարինում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 150 | հետևի կայունարարի վրանների փոխարինում | | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 151 | հետևի կայունարարի կանգնակի փոխարինում | | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 152 | Հետևի զսպանակի փոխարինում | 7 | 7 | 7 | 9 | 9 | 9 |
| 153 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 7 | 7 | 7 | 9 | 9 | 9 |
| 154 | Հետևի ձգածողի հանում և տեղադրում | 12 | 12 | 12 | 12 | 12 | |
| 155 | Հետևի երկաթածողի հանում և տեղադրում | 0.1 | 0.1 | 15 | 0.1 | 0.1 | |
| 156 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | 5 | 5 | 5 | 6 | 6 | 6 |
| 157 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 158 | Անկյունագծային լծակի վրանների փոխարինում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |

| | | | | | | | |
|--------------------------------|--|-----|-----|-----|-----|-----|-----|
| 159 | Անվարացքի կարգավորում | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 160 | Ջողման աշխատանքներ 1 քառ.սմ համար | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 8. Ղեկային մեխանիզմ | | | | | | | |
| 161 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 162 | Նույնը V6-ի համար | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 163 | Ղեկային կալունի վերանորոգում | 50 | 50 | 50 | 50 | 50 | 50 |
| 164 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 165 | ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 166 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | 6 | 6 | 6 | 8 | 8 | 8 |
| 167 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 168 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում | 3 | 3 | 3 | 4 | 4 | 4 |
| 169 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 170 | Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում | 5 | 5 | 5 | 6 | 6 | 6 |
| 171 | Նույնը DOHC դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 172 | Նույն կողիցիոների դեպքում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 173 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 174 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 9. Արգելակային համակարգ | | | | | | | |
| 175 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 176 | Գլխ. գլանի վերանորոգում | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| 177 | Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 178 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 8 | 8 | 8 | 9 | 9 | 9 |
| 179 | Բանվ. գլանի վերանորոգում | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 180 | Արգելակային համակարգի օդահանում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 181 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 6 | 6 | 6 | 6 | 6 | |
| 182 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում | 6 | 6 | 6 | 6 | 6 | |
| 183 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 12 | 12 | 12 | 12 | 12 | |
| 184 | Հետևի սուպպորտի վերանորոգում | 12 | 12 | 12 | 12 | 12 | |
| 185 | Արգելակային փողրակի փոխարինում | 4 | 4 | 4 | 5 | 5 | 5 |
| 186 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 5 | 5 | 5 | 6 | 6 | 6 |
| 187 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | | 5 | 5 | 6 | 6 | |
| 188 | Հետևի կոճղակների փոխարինում | 6 | 6 | 6 | 7 | 7 | 7 |
| 189 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 6 | 6 | 6 | 7 | 7 | |
| 190 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 7 | 7 | 7 | 8 | 8 | 8 |
| 191 | Արգելակային սկավառակի հղկում | 18 | 18 | 18 | 18 | 18 | |